ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ԱՐԵՎԱՇՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Արևաշող համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ. Արևաշող, 0255-2-21-76 arevashogh.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 դեկտեմբերի 2020 թվականի N 32

ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱՐԵՎԱՇՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 16 - Ի ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական Ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածով՝

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հաստատել Արևաշող համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 16 – ի նիստի օրակարգը

Օրակարգ

Արևաշող համայնքի ավագանու 2020թ – ի դեկտեմբերի 16 – ի նիստի

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Արևաշող գյուղական համայնքում 2021 թվականի համար տեղական տուրքերի և վճարների տեսակները, դրույքաչափերը սահմանելու մասին:
2. Լոռու մարզի Արեվաշողի համայնքապետարանում եվ նրա ենթակայության տակ գործող հիմնարկներում 2020 թվականի նոյեմբերի 5 - ից 6 - ը անցակացված գույքագրման արդյունքները հաստատելու մասին
3. Արեվաշող համայնքի համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերից աճուրդ վաճառքով օտարելու մասին
4. Լոռու մարզի Արեվաշող համայնքի 2021 թվականի տարեկան բյուջեն հաստատելու մասին

Կողմ - 6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԴԱՄՅԱՆ ԱՐԱՄ

ԱՓԻՑԱՐՅԱՆ ԿԱՐԵՆ

ԳՅՈՒԼԱՋՅԱՆ ԱՐՏԱԿ

ՀԱՄԲԱՐՅԱՆ ԱԼՎԱՐԴ

ՀԱՄԲԱՐՅԱՆ ՀՐԱՅՐ

ՊԵՏՐՈՍՅԱՆ ՀԱՅԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՊԵՐՃ ՊԱՊԻԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ԱՐԵՎԱՇՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Արևաշող համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ. Արևաշող, 0255-2-21-76 arevashogh.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 դեկտեմբերի 2020 թվականի 33-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱՐԵՎԱՇՈՂ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ, ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Տեղական Ինքնակառավարման մասին» օրենքի 18 - րդ հոդվածի 1 – ին մասի 18 - րդ և 19 – րդ կետերով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքի 8 - րդ, 9 - րդ, 10 - րդ, 11 – րդ, 12 – րդ, 13 – րդ, 14 – րդ հոդվածներով և «Նորմատիվ Իրավական ակտերի մասին» օրենքի 23 – րդ հոդվածով՝

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Արևաշող գյուղական համայնքում 2021 թվականի համար տեղական տուրքերի և վճարների տեսակները, դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2021թ. հունվարի 1 - ին:

Կողմ - 6 Դեմ - 0 Ձեռնպահ - 0

ԱԴԱՄՅԱՆ ԱՐԱՄ

ԱՓԻՑԱՐՅԱՆ ԿԱՐԵՆ

ԳՅՈՒԼԱՋՅԱՆ ԱՐՏԱԿ

ՀԱՄԲԱՐՅԱՆ ԱԼՎԱՐԴ

ՀԱՄԲԱՐՅԱՆ ՀՐԱՅՐ

ՊԵՏՐՈՍՅԱՆ ՀԱՅԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՊԵՐՃ ՊԱՊԻԿՅԱՆ

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Լոռու մարզի Արևաշող համայնքի ավագանու
2020թ. Դեկտեմբերի 16 - ի թիվ 33 - Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱՐԵՎԱՇՈՂ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ, ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐ

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության (տեղադրման) (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) թույլտվության համար.
   1) հիմնական շենքերի և շինությունների համար՝
   ա. մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների համար՝4500 (չորս հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ.
   2) սույն կետի «ա» կետով չնախատեսված շենքերի և շինությունների համար՝
      ա. 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 9000 (ինը հազար) ՀՀ դրամ.
      բ. 500-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 15000 (տասնհինգ հազար) ՀՀ դրամ.
      գ. 1000-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 15000 (տասնհինգ հազար) ՀՀ դրամ.
      դ. 3000-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 30000 (երեսուն հազար) ՀՀ դրամ.
   3) ոչ հիմնական շենքերի և շինությունների համար՝
      ա. մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 900 (ինը հարյուր) ՀՀ դրամ.
      բ. 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 1500 (մեկ հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ.
2. համայնքի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի և շինությունների վերակառուցման, վերականգնման, ուժեղացման, արդիականացման և բարեկարգման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝
   1) չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ 900 (ինը հարյուր) ՀՀ դրամ.
   2) բացի շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի տրամաչափային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, և, բացի սույն կետի «1)» ենթակետով սահմանված դրույքաչափից, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հավելված 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը՝ շենքերի և շինությունների ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով,
   3) նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ

շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հավելվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը.

3. համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների և քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված քանդման թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար՝ սահմանել՝ 1500 (մեկ հազար հինգ հարյուր) << դրամ.
4. համայնքի վարչական տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ 60000 (վաթսուն հազար) << դրամ.
5. համայնքի վարչական տարածքում գտնվող խանութներում և կրպակներում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի, մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ 18000 (տասնութ հազար) << դրամ.
6. համայնքի վարչական տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի որոշակի վայրում մանրածախ առք ու վաճառք իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ 15000 (տասնհինգ հազար) << դրամ.
7. համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների կամ օրենքով սահմանված սահմանափակումներին համապատասխան ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառքի թույլտվության համար՝ տեղական տուրքը սահմանել՝
   1) ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝
      ա. մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 2600.1 (երկու հազար վեց հարյուր << դրամ մեկ լումա),
      բ. 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 3600 (երեք հազար վեց հարյուր) << դրամ,
      գ. 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 4600.2 (չորս հազար վեց հարյուր << դրամ երկու լումա),
      դ. 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 7500 (յոթ հազար հինգ հարյուր) << դրամ,
      ե. 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 13500 (տասերեք հազար հինգ հարյուր) << դրամ,
      զ. 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 30000 (երեսուն հազար) << դրամ:
   2) օրենքով սահմանված սահմանափակումներին համապատասխան ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝
      3) ա. մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 2600.1 (երկու հազար վեց հարյուր << դրամ մեկ լումա),
      4) բ. 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 3600 (երեք հազար վեց հարյուր) << դրամ,

5) գ. 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 4600.2 (չորս հազար վեց հարյուր ՀՀ դրամ երկու լումա),
6) դ. 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 7500 (յոթ հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ,
7) ե. 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 13500 (տասներեք հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ,
8) զ. 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 30000 (երեսուն հազար) ՀՀ դրամ:

8. իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ բացօթյա առևտրի կազմակերպման թույլտվության համար՝ յուրաքանչյուր օրվա համար 105 (մեկ հարյուր հինգ) ՀՀ դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար.
9. համայնքի վարչական տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, խաղատներին և բաղնիքներին (սաունաներին) ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ տեղական տուրքը սահմանել՝
   1) առևտրի օբյեկտների համար՝ 15 000 (տասնհինգ հազար) ՀՀ դրամ.
   2) հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ 30000 (երեսուն հազար) ՀՀ դրամ.
   3) բաղնիքների (սաունաների) համար՝ 150000 (մեկ հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ.
   4) խաղատների համար՝ 300000 (երեք հարյուր հազար) ՀՀ դրամ.
   5) շահումով խաղերի համար՝ 150000 (մեկ հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ.
   6) վիճակախաղերի համար՝ 45000 (քառասունհինգ հազար) ՀՀ դրամ:
10. համայնքի վարչական տարածքում, համայնքային կանոններին համապատասխան, հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝
   1) հիմնական շինությունների ներսում՝ ՝
      ա. մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 1500 (մեկ հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ,
      բ. 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 3000 (երեք հազար) ՀՀ դրամ,
      գ. 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 4500 (չորս հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ,
      դ. 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 6000 (վեց հազար) ՀՀ դրամ,
      ե. 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 9000 (ինը հազար) ՀՀ դրամ,
      զ. 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 15000 (տասնհինգ հազար) ՀՀ դրամ,
   2) ոչ հիմնական շինությունների ներսում՝
      ա. մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 300 (երեք հարյուր) ՀՀ դրամ,
      բ. 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 600 (վեց հարյուր) ՀՀ դրամ,
      գ. 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 1200 (մեկ հազար երկու հարյուր) ՀՀ դրամ,
      դ. 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 2400 (երկու հազար չորս հարյուր) ՀՀ դրամ,

ե. 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 4500 (չորս հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ,

զ. 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 7500 (յոթ հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ:

11. ավագանու սահմանած կարգին ու պայմաններին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար, բացառությամբ միջպետական ու հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների օտարման շերտերում և պաշտպանական գոտիներում տեղադրվող գովազդների թույլտվությունների, յուրաքանչյուր ամիս մեկ քառակուսի մետրի համար՝ տեղական տուրքը սահմանել՝
    1) ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 600 (վեց հարյուր) ՀՀ դրամ.
    2) թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 1050 (մեկ հազար հիսուն) ՀՀ դրամ.
    3) սոցիալական գովազդի համար՝ 0 (զրո) ՀՀ դրամ
    4) այլ արտաքին գովազդի համար՝ 450 (չորս հարյուր հիսուն) ՀՀ դրամ.
    5) դատարկ գովազդային վահանակների համար՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 25 %-ի չափով՝ 112 (մեկ հարյուր տասներկու) ՀՀ դրամ
    6) եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 10 %-ի չափով՝ 45 (քառասունհինգ) ՀՀ դրամ:
12. Հայաստանի Հանրապետության համայնքների խորհրդանիշերը (զինանշան, անվանում և այլն), որպես օրենքով գրանցված ապրանքային նշան, ապրանքների արտադրության, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման գործընթացներում օգտագործելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ 30000 (երեսուն հազար) ՀՀ դրամ.
13. համայնքի վարչական տարածքում մարդատար-տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների՝ միկրոավտոբուսների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարում յուրաքանչյուր մեքենայի համար՝ 3000 (երեք հազար) ՀՀ դրամ.
14. համայնքի վարչական տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայությունների իրականացման և (կամ) մատուցման թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ 150000 (մեկ հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ:
15. համայնքի վարչական տարածքում մասնավոր գերեզմանատան կազմակերպման և շահագործման թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝
    1) 3 հա-ից մինչև 5 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 750000 (յոթ հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ.
    2) 5 հա-ից մինչև 7 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 1500000 (մեկ միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ.
    3) 7 հա-ից մինչև 10 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 2100000 (երկու միլիոն մեկ հարյուր հազար) ՀՀ դրամ.
    4) 10 հա-ից ավել մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 3000000 (երեք միլիոն) ՀՀ դրամ.
16. համայնքի վարչական տարածքում տեխնիկական և հատուկ նշանակության հրավառություն իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար 15000 (տասնհինգ հազար) ՀՀ դրամ:
17. համայնքի տարածքում սահմանափակման ենթակա ծառայության օբյեկտի գործունեության թույլտվության համար՝
    1) կարաոկեի, դիսկոտեկի, բաղնիքի, սաունայի և շոգեբաղնիքի համար՝ օրացուցային տարվա համար՝ համայնքի վարչական տարածքում 6000 (վեց հազար) ՀՀ դրամ,

2) հեստապարային ակումբի համար՝ օրացուցային տարվա համար՝ համայնքի վարչական տարածքում 90000 (իննսուն հազար) ՀՀ դրամ:

ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐ

1. Համայնքի տարածքում շենքի կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար. 5000 (հինգ հազար) ՀՀ դրամ:
2. Ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված շինարարության թույլտվություն պահանջող, բոլոր շինարարական աշխատանքներն իրականացնելուց հետո շենքերի և շինությունների (այդ թվում՝ դրանց վերակառուցումը, վերականգնումը, ուժեղացումը, արդիականացումը, ընդլայնումն ու բարեկարգումը) կառուցման ավարտը ավարտական ակտով փաստագրման ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար. 10000 (տաս հազար) դրամ:
3. Ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքներն ավարտելուց հետո շահագործման թույլտվության ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար.՝ 10000 (տաս հազար) դրամ:
4. համայնքի տնօրինության և օգտագործման ներքո գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում փաստաթղթերի (փաթեթի) նախապատրաստման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար. 5000 (հինգ հազար) ՀՀ դրամ
5. համայնքի կողմից կազմակերպվող մրցույթների և աճուրդների մասնակցության համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար. 5000 (հինգ հազար) ՀՀ դրամ:
6. համայնքի վարչական տարածքում տոնավաճառներին (վերնիսաժներին) մասնակցելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար. 0 (զրո) ՀՀ դրամ:
7. համայնքի կողմից աղբահանության վճար վճարողների համար աղբահանության աշխատանքները կազմակերպելու համար աղբահանության վճարը ըստ հասցեի հաշվառում ունեցող և (կամ) բնակվող յուրաքանչյուր բնակչի համար ամսական 50 (հիսուն) ՀՀ դրամ:
8. Համայնքում առկա ոչ բնակելի նպատակային նշանակության շենքերում և (կամ) շինություններում, այդ թվում՝ հասարակական, հանրային, ծառայությունների մատուցման, արտադրական, արդյունաբերական շենքերում և (կամ) շինություններում աղբահանության վճար
   1) առևտրի (այդ թվում՝ շուկաների), հանրային սննդի և բնակչության սպասարկման այլ ծառայություններ իրականացվող շինությունների մասով մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ 50 (հիսուն) ՀՀ դրամ,
   2) հյուրանոցների և հյուրանոցային տնտեսության ծառայություններ, ինչպես նաև այլ գործունեություն իրականացնող հասարակական շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ 20 (քսան) ՀՀ դրամ,
   3) արտադրական, արդյունաբերական և գրասենյակային նշանակության շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ 5 (հինգ) ՀՀ դրամ.
   4) կրթական, մշակութային, առողջապահական, սպորտային, գիտահետազոտական և նմանատիպ այլ հասարակական շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար 3 (երեք) ՀՀ դրամ:
   5) շինություններում, որտեղ իրականացվում է մեկից ավելի առանձնացված տնտեսական գործունեություն, աղբահանության վճարն ամբողջությամբ հաշվարկել առավել բարձր դրույքաչափով:
9. համայնքի կողմից իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերին շինարարական և խոշոր եզրաչափի աղբի հավաքման և փոխադրման, ինչպես նաև աղբահանության վճար վճարողներին՝ շինարարական և խոշոր եզրաչափի աղբի ինքնուրույն հավաքման և փոխադրման թույլտվության համար՝ աղբահանության վճար սահմանել 3000 (երեք հազար) ՀՀ դրամ:
10. կենտրոնացված ջեռուցման համար՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման գումարի չափով, բացառությամբ «Հանրային

ծառայությունները կարգավորող մարմնի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն սահմանված հանրային ծառայությունների կարգավորվող ոլորտներում սակագների սահմանման դեպքերի.

11. ջրմուղ-կոյուղու համար ջրամատակարարման տեղական վճար՝ տարեկան 1500 (մեկ հազար հինգ հարյուր) << դրամ.
12. ոռոգման ջրի մատակարարման համար ոռոգվող հողամասի մեկ քառակուսի մետրի համար տեղական վճար սահմանել տարեկան 1 (մեկ) << դրամ
13. համայնքի կողմից կառավարվող բազմաբնակարան շենքերի ընդհանուր բաժնային սեփականության պահպանման պարտադիր նորմերի կատարման համար՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման գումարի չափով.
14. համայնքային ենթակայության մանկապարտեզի ծառայությունից օգտվողների համար՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ համայնքում հաշվառված երեխաների ծնողներից 4000 (չորս հազար) << դրամ այլ համայնքում հաշվառված երեխաների ծնողներից 6000 (վեց հազար) << դրամ.
15. Արցախից ժամանած և համայնքային ենթակայության մանկապարտեզի ծառայությունից օգտվողների համար՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց տեղական վճար՝ երեխաների ծնողներից 0 (զրո) << դրամ.
16. համայնքային ենթակայության արտադպրոցական դաստիարակության հաստատությունների (երաժշտական, նկարչական և արվեստի դպրոցներ և այլն) ծառայություններից օգտվողների համար՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման գումարի չափով.
17. համայնքի վարչական տարածքում, սակայն համայնքի բնակավայրերից դուրս գտնվող՝ ավագանու որոշմամբ հանրային հանգստի վայր սահմանված և համայնքի կողմից կամ համայնքի պատվերով որպես հանրային հանգստի վայր կահավորված տարածքում ընտանեկան կամ գործնական միջոցառումներ անցկացնելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար. 0 (զրո) << դրամ:
18. համայնքային սեփականություն հանդիսացող պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների և համայնքային ենթակայության թանգարանների մուտքի համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման՝ վճար 0 (զրո) << դրամ:
19. համայնքային սեփականություն հանդիսացող ընդհանուր օգտագործման փողոցներում և հրապարակներում (բացառությամբ բակային տարածքների, ուսումնական, կրթական, մշակութային և առողջապահական հաստատությունների, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների վարչական շենքերի հարակից տարածքների) ավտոտրանսպորտային միջոցն ավտոկայանատեղում կայանելու համար
    1) յուրաքանչյուր մեկ ժամվա համար՝ 0 (զրո) << դրամ ներառյալ.
    2) յուրաքանչյուր մեկ օրվա համար՝ 0 (զրո) << դրամ ներառյալ.
    3) մեկ շաբաթվա համար՝ 0 (զրո) << դրամ ներառյալ.
    4) մեկ ամսվա համար՝ 0 (զրո) << դրամ ներառյալ.
    5) մեկ տարվա համար՝ 0 (զրո) << դրամ ներառյալ:
20. համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ տրամադրելու համար՝ մեկ փաստաթղթի համար՝ փոխհատուցման վճար 300 (երեք հարյուր) << դրամ.
21. համայնքն սպասարկող անասնաբույժի ծառայությունների դիմաց տեղական վճար՝
    1) Կենդանիների հիվանդությունների բուժման, կանխարգելման հարցերով խորհրդատվություն 0 (զրո) << դրամ
    2) Ծննդօգնություն
        ա. Թեթև միջամտություն 1000 (մեկ հազար) << դրամ
        բ. Ծանր միջամտություն 2000 (երկու հազար) << դրամ
    3) Վարակիչ հիվանդությունների նկատմամբ կենդանիների իմունականխարգելիչ պատվաստումներ և արյունառում կամ այլ նմուշառում՝ կախված կենդանու տեսակից (բացառությամբ՝ «Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում» պետական ծրագրում ընդգրկված հակաանասնահամաճարակային միջոցառումների)
        ա. Մանր կենդանի 100 (մեկ հարյուր) << դրամ

բ. Խոշոր կենդանի 200 (երկու հարյուր) ՀՀ դրամ

4) Կենդանիների արտաքին և ներքին մանկաբույծների դեմ պայքար 200 (երկու հարյուր) ՀՀ դրամ
5) Ախտահանություն 1 քառ. մետր 100 (մեկ հարյուր) ՀՀ դրամ
6) Միջատազերծում (դեզինսեկցիա) 1 քառ. մետր 100 (մեկ հարյուր) ՀՀ դրամ
7) Կրծողների ոչնչացում (դեռատիզացիա) 1 քառ. մետր 100 (մեկ հարյուր) ՀՀ դրամ
8) Արհեստական սերմնավորում 5000 (հինգ հազար) ՀՀ դրամ
9) Կենդանու հերձում

ա. Մանր կենդանի 1000 (մեկ հազար) ՀՀ դրամ

բ. Խոշոր կենդանի 3000 (երեք հազար) ՀՀ դրամ

10) Կենդանու բուժում՝ կախված հիվանդության տեսակից և կենդանու տեսակից յուրաքանչյուր այցելությունը 1000 (մեկ հազար) ՀՀ դրամ
11) Կենդանիների նախասպանդային զննում՝

ա. մանր կենդանի 500 (հինգ հարյուր) ՀՀ դրամ

բ. խոշոր կենդանի 1000 (մեկ հազար) ՀՀ դրամ

12) Կենդանիների հետսպանդային զննում՝

ա. մանր կենդանի 500 (հինգ հարյուր) ՀՀ դրամ

բ. խոշոր կենդանի 1000 (մեկ հազար) ՀՀ դրամ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ /Պ. ՊԱՊԻԿՅԱՆ/

16 Դեկտեմբերի 2020թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ԱՐԵՎԱՇՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Արևաշող համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ. Արևաշող, 0255-2-21-76 arevashogh.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2020 թվականի N 34

ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱՐԵՎԱՇՈՂԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆՈՒՄ ԵՎ ՆՐԱ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՏԱԿ ԳՈՐԾՈՂ ՀԻՄՆԱՐԿՆԵՐՈՒՄ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 5 - ԻՑ 6 - Ը ԱՆՑԱԿԱՑՎԱԾ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Տեղական Ինքակառավարման մասին» օրենքի 18 - րդ հոդվածի 1 - ին կետի 32) ենթակետով համայնքի

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

Հաստատել Լոռու մարզի Արևաշողի համայնքապետարանում և նրա ենթակայության տակ գործող հիմնարկներում 2020 թվականի նոյեմբերի 5 - ից 6 - ը անցկացված գույքագրման արդյունքները:

Կողմ - 6 Դեմ - Ձեռնպահ -

ԱԴԱՄՅԱՆ ԱՐԱՄ

ԱՓԻՑԱՐՅԱՆ ԿԱՐԵՆ

ԳՅՈՒԼԱՋՅԱՆ ԱՐՏԱԿ

ՀԱՄԲԱՐՅԱՆ ԱԼՎԱՐԴ

ՀԱՄԲԱՐՅԱՆ ՀՐԱՅՐ

ՊԵՏՐՈՍՅԱՆ ՀԱՅԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՊԵՐՃ ՊԱՊԻԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԱՐԵՎԱՇՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Արևաշող համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ. Արևաշող, 0255 2-21-76 arevashogh.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2020 թվականի N 35

ԱՐԵՎԱՇՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻՑ ԱՃՈՒՐԴ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18 - րդ հոդվածի 1 - ին մասի 21 - րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 67 - րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001թ - ի ապրիլի 12 - ի թիվ 286-Ն որոշմամբ հաստատված կարգով, հաշվի առնելով համայնքի ղեկավարի ներկայացրած առաջարկությունը Արևաշող համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

1. Տալ համաձայնություն համայնքի ղեկավարի առաջարկությանը Արևաշող համայնքի վարչական սահմաններում գտնվող՝ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերից ներքոհիշյալ հողամասը աճուրդ վաճառքով օտարելուն
   1) լոտ 1 ծածկագիր 06-021-0043-0018, 0.007471 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման գործառնական նշանակության, /վկ.15052020-06-0038/ մեկնարկային գինը սահմանել 51000 /հիսունմեկ հազար/ ՀՀ դրամ (1 քմ 682 ՀՀ դրամ),
   2) լոտ 2 ծածկագիր 06-021-0044-0036 0.03329 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության /վկ. 07092020-06-0056 /մեկնարկային գինը սահմանել ՀՀ դրամ 86580 /ութսունվեց հազար հինգ հարյուր ութսուն/ ՀՀ դրամ (1 քմ 260 ՀՀ դրամ),
2. Համայնքի ղեկավարին մրցույթով աճուրդ-վաճառքի անցկացումից մեկ ամիս առաջ մամուլով և զանգվածային լրատվության այլ միջոցներով հրապարակել սակարկությունների անցկացման տեղը, օրը, ժամը, հողամասի գտնվելու վայրը, ծածկագիրը, մեկնարկային գինը, օգտագործման նպատակը, չափերը, ճանապարհների, ջրատարի, կոյուղու, էլեկտրահաղորդման գծերի, գազատարի առկայության մասին տվյալները, ինչպես նաև տվյալ հողամասի նկատմամբ սահմանափակումները (ներառյալ՝ սերվիտուտները):
3. Սահմանել՝ աճուրդի և մրցույթի մասնակցության վճար 5000 (հինգ հազար) ՀՀ դրամ, (աճուրդային մրցույթի մեկ քայլի չափը՝ լոտի մեկնարկային գնի 5%-ի չափով, նախավճարի չափը սահմանել՝ լոտի մեկնարկային գնի 5%-ի չափով:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ - 6 Դեմ - 0 Ձեռնպահ - 0

ԱԴԱՄՅԱՆ ԱՐԱՄ

ԱՓԻՑԱՐՅԱՆ ԿԱՐԵՆ

ԳՅՈՒԼԱԶՅԱՆ ԱՐՏԱԿ

ՀԱՄԲԱՐՅԱՆ ԱԼՎԱՐԴ

ՀԱՄԲԱՐՅԱՆ ՀՐԱՅՐ

ՊԵՏՐՈՍՅԱՆ ՀԱՅԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՊԵՐՃ ՊԱՊԻԿՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ԱՐԵՎԱՇՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Արևաշող համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ. Արևաշող, 0255-2-21-76 arevashogh.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 դեկտեմբերի 2020 թվականի N 36-Ն

ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱՐԵՎԱՇՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական Ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18 – րդ հոդվածի 1 – ին մասի 5 – րդ կետով «Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32 – րդ հոդվածի 5 – րդ կետով համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

1. Հաստատել Լոռու մարզի Արևաշող համայնքի 2021 թվականի տարեկան բյուջեն համաձայն թիվ 1 - ից 6 հավելվածների:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման տասներորդ օրը:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԴԱՄՅԱՆ ԱՐԱՄ

ԱՓԻՑԱՐՅԱՆ ԿԱՐԵՆ

ԳՅՈՒԼԱԶՅԱՆ ԱՐՏԱԿ

ՀԱՄԲԱՐՅԱՆ ԱԼՎԱՐԴ

ՀԱՄԲԱՐՅԱՆ ՀՐԱՅՐ

ՊԵՏՐՈՍՅԱՆ ՀԱՅԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՊԵՐՃ ՊԱՊԻԿՅԱՆ